րաններին, իսկ Ժ. դարում նաև մանր արուեստի արտադրութիւնների մէջ։ Սրանց պատկերագրական երևոյթն ու զարգացումը կապուած էր աւետարանական պատմութեան և ապա Քրիստոսի արեան դաւանաբանական ու ժամապաշտական հայեացքի հետ, ուստի և սկզբում մէկը՝ միայն վեր բարձրացրած նիզակով և միւսը իր եղեգնի



Պատկեր 32

Սեբաստ. Ս. Նշան. աւետ. մանրանկար Ռոսլինի 1262 թ.

ծայրին ամրացրած սպունգով, ապա ակնյայտնի խոցով և արեան կաթիլներով կամ հոսանքով։ Նիզակաւորը աւետարանի հարիւրապետն է, ըստ աւանդութեան Ղունկիանոս կամ Ղինկիանոս(1) կոչուած հէնց իր զէնքի (λόγχη) անունով, իսկ միւսն էլ հրեայ է համարւում, աւետարանի (Մատթ. Իէ. 48) «մի ոմն ի նոցանէ» խօսքի համաձայն, Ստեփատոն կոչուած։ Ղունկիանոսը մինչև իսկ սուրբերի շարքն է մտած. ըստ աւանդութեան նա միականի էր, արեան ցայտելով կոյր աչքի մէջ՝ բժշկուել է և հաւատացել Քրիստոսին(1)։ Այս աւանդութիւնն էլ իր ազդեցութիւնն է ունեցել Ղունկիանոսի պատկերագրութեան մէջ. նըկարւում է գլուխն այնպէս վեր բարձրացրած, որ արիւնը ցայտէր աչքի մէջ։ Դաւանաբանական հայեացքի հետ կապ ունի, անշուշտ, և այն հանգամանքը, որ Ղունկիանոս և Ստեփանատոն նկարուած են ոչ միայն փոքր գիրքով, ինչպէս Էջմիածնի վերև յիշուած ձեռագրի մէջ, այլ և հազիւ նկատելի են նրանց պատկերները, յատկապէս գլուխները։

Այս նկարագրութիւններից և համեմատութիւններից երևում է, որ մեր մանրանկարներն իրենց օրինակների ծաղմամբ ընդհանրապէս Թ–Ժ. դարերի պատկերագրութեան դրոշմ ունին. նախնականութիւնը առանց թըւականի էլ առաջին երկուսի կողմըն է, որոնք աւելի մօտ են Խըլուղալի սաղմոսարանի և Գրիգոր Աստուածաբանի ճառերի պատկերագրութեան, յոյլերի աւելի պակաս արտայայտութեամբ եւ ֆիգուրների գիրքերով, թէեւ գեղարուեստական կողմից թոյլ։ Էջմիածնի N 362/3784 ձեռագըրում, օրինակ, Ղունկիանոս նիզակը բռնել է ճիշդ այնպէս, ինչպէս Խլուդովի սաղմոսարանի մանրանկարի մէջ, կամ Յովհաննէս ձեռքը ծնօտին դրել, թէև գիրքերը տարբեր։ Այս ձեռագիրը մի քանի տարի յետոյ է գրուած Խանդալի աւետարանից, բայց համեմատաբար աւելի պահել նախնականութեան նշաններ, քան միւսը. այստեղ չկայ արեան ոչ մի նշան, մինչդեռ Խանդալի աւետարանի մէջ Ղունկիանոս իր նիզակը խրել է արդէն Յիսուսի կողը, որտեղից արեան կաթիլներ են թափւում։ Խաչափայտն էլ միանգամայն պարզ է, անմիջապէս հաստատուած Գողգոթայի բլրի մէջ, ուր և մեխուած են Յիսուսի ոտքերը, առանց քառանկիւնի պատուանդանի, ինչպէս Խանդալի

(1) Ձեռ. Էջմ. N 589 նժ. 372թ. Տօնական։

(1) Յայսմաւուրք։